

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նիստի

ք. Երևան

27 նոյեմբերի 2006 թվականի

Նախագահում էր՝

Ա. Մարգարյան - ՀՀ վարչապետ, խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Վ. Ներսիսյանց - ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական,
խորհրդի նախագահի տեղակալ
- Ա. Հակոբյան - ՀՀ վարչապետի խորհրդական
- Տ. Դավթյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ
- Վ. Մովսիսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական
տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության պետ,
խորհրդի քարտուղար
- Յու. Շուքրյան - ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխպրեզիդենտ
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն
- Գ. Չուգասյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական
կազմակերպության նախագահ
- Կ. Հարությունյան - «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրեն
- Հ. Խանջյան - «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ

Հրավիրվածներ՝

- Մ. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակա-
յան հետ կապերի վարչության պետ
- Գ. Նիկողոսյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք-
ների վարչության պետ
- Գ. Առաքելյան - ՀՀ կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածք-
ների վարչության գլխավոր մասնագետ
- Դ. Մանդուխյան - «Ինտերնյուս» հասարակական կազմակերպության ծրագրի
համակարգող
- Ա. Բաղդրյան - «Յունիքոմփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

- Հ. Մուսայելյան - «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
- Ա. Ալեքսանյան - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության գլխավոր տնօրեն
- Հ. Ավոյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Ա. Վարդանյան - «Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն
- Ժ. Ազիզյան - ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ
- Հ. Ալեքսանդր - «CAPS» ծրագրի տնօրեն
- Ա. Մելքոնյան - «CAPS» ծրագրի փոխտնօրեն
- Գ. Բարսեղյան - «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
- Գ. Բալոյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի կապի վարչության պետ
- Լ. Բարոյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տեսչական և լիցենզավորման բաժնի պետ
- Ա. Սարգսյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ
- Ա. Մկրտչյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան)

2. 2006 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների ամփոփում

(Ա. Հակոբյան, Տ. Դավթյան, Գ. Չուգասզյան, Բ. Ենգիբարյան, Կ. Վարդանյան)

3. Հայաստանի Հանրապետությունում Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՏՏ-ի զարգացմանը խոչընդոտող իրավա-օրենսդրական փոփոխություններին վերաբերող առաջարկությունների մասին

(Դ. Սանդուխյան)

4. Այլ հարցեր:

- 1. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

(Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան, Տ. Դավթյան, Դ. Սանդուխյան, Գ. Չուգասզյան, Ա. Մարգարյան)

ՀՀ վարչապետի խորհրդական Ա. Հակոբյանին և Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանին՝ մինչև խորհրդի հաջորդ նիստը ՏՀՏ բաղադրիչ պարունակող վարկային և (կամ) դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկատվության վերաբերյալ խորհրդի անդամների կողմից ներկայացված կարծիքները հավաքագրել, քննարկել խորհրդի աշխատանքային խմբերում և քննարկումների արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնել խորհրդի առաջիկա նիստում:

- 2. 2006 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների ամփոփում

(Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան, Տ. Դավթյան, Գ. Չուգասզյան, Բ. Ենգիբարյան, Կ. Վարդանյան, Հ. Մուսայեյյան, Յու. Շուքուրյան, Հ. Ավոյան, Դ. Սանդուխյան, Հ. Խանջյան, Ա. Մարգարյան)

1. Բարձր գնահատել 2006 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը անցկացված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների կազմակերպման և անցկացման համար իրականացված աշխատանքները:

- 2. ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, խորհրդի նախագահի

տեղակալ Վ. Ներսիսյանցին՝ մինչև խորհրդի հաջորդ նիստը Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնել 2006 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը անցկացված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների կազմակերպման և անցկացման գործում նշանակալի ներդրում ունեցող մասնակիցներին Հայաստանի Հանրապետության վարչապետի խրախուսանքին ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն:

3. Հայաստանի Հանրապետությունում Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՏՏ-ի զարգացմանը խոչընդոտող իրավա-օրենսդրական փոփոխություններին վերաբերող առաջարկությունների մասին

(Ա. Գրիգորյան, Դ. Սանդուխյան, Ա. Հակոբյան, Տ. Դավթյան, Բ. Ենգիբարյան, Ա. Մարգարյան)

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի տեղակալ Տ. Դավթյանին՝ քննարկել իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ներկայացված առաջարկությունները և ձեռնարկել միջոցներ սահմանված կարգով համապատասխան առաջարկություններ ներկայացնելու համար:

4. Այլ հարցեր

(Ա. Գրիգորյան, Գ. Չուգասզյան, Հ. Ալեքսանդր, Ա. Մելքոնյան, Ա. Մարգարյան)

Ընդունել ի գիտություն «CAPS» ծրագրի տնօրեն Հ. Ալեքսանդրի կողմից ներկայացված տեղեկատվությունը «CAPS» ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.